

Երկու հազար տասնմեկ թվականի հունիսի քսաներկուսին, ժամը՝ 15:00-ին «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց 28» հասցեում տեղի ունեցավ «Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (այսուհետ՝ «Ժողով»):

Մասնակցում էին Ընկերության թվով 418 217 (չորս հարյուր տասնութ հազար երկու հարյուր տասնյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող թվով 307 206 (երեք հարյուր յոթ հազար երկու հարյուր վեց) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերերը կամ նրանց լիազոր ներկայացուցիչները ներքոհիշյալ կազմով՝

Թվով 297 071 հատ (71.0327414 %) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող «ԷԼԻՏ-ՆՆ ՖԻՆԱՆՍ ՔԱՄՓՆԻ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Ռուդիկ Սկրտումյանի,

Թվով 2 868 հատ (0.6857684 %) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Սահակ Հակոբի Հակոբյանը,

Թվով 2070 հատ (0.4949584%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Սիեր Խաչիկի Խաչատրյանը,

Թվով 2049 հատ (0.4899370 %) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Ահարոն Վաչիկի Հարությունյանը,

Թվով 1148 հատ (0.2744986%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Ռոբերտ Ալեքսանդրի Դարբինյանը,

Թվով 656 հատ (0.1568564 %) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Աննա Առուստամյանը,

Թվով 549 հատ (0.1312716%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Կոլյա Հովհաննեսի Կարապետյանը,

Թվով 486 հատ (0.1162076%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Վարազդատ Հրաչիկի Ներսիսյանը,

Թվով 160 հատ (0.0382577%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Գագիկ Գևորգի Հովսեփյանը,

Թվով 149 հատ (0.356274%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր Ռայա Աշոտի Անանյանը:

Ընկերության բաժնետեր Բագրատ Համբարձումի Մամուկյանի (131 հատ /0.0313235%/ հասարակ անվանական բաժնետոմս) ներկայացուցիչը ներկայացել է առանց լիազորագրի:

Ապահովված էր Ժողովի անցկացման համար անհրաժեշտ (307 206 ձայն) քվորումը:

Հրավիրված էին Ընկերության տնօրեն Վահրամ Թեփեղիկյանը, գլխավոր հաշվապահ Դոնարա Մայանյանը և Ընկերության վերստուգող Ալեքսանդր Հարությունյանը:

Ժողովը նախագահում էր տնօրենների նախագահ Կարեն Մանուկովը:

Բաց քվեարկությամբ Ժողովի արձանագրող քարտուղար ընտրվեց Աննա Առուստամյանը:

Օր ա կ ա ր գ

Ընկերության տարեկան ժողովի Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության և հաստատման հարցը:

Ընկերության տնօրենի զեկույցը 2010թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ:

Ընկերության 2010 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացումը:

Ընկերության 2010 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներկայացումը:

Ընկերության 2010 թվականի տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի հաշվի, շահույթի և վնասի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման հարցը:

Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի, դրա անդամների ընտրության և հաստատման հարցը:

Առդիտն իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:

Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-հարց 1`

Առաջին հարցի կապակցությամբ Ընկերության ժողովի նախագահ Կարեն Մանուկովը, առաջարկեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը` բաղկացած 3 անդամներից: Առաջարկվեց Աննա Առուստամյանին, Ջուլիետա Դալլաքյանին և Սահակ Հակոբյանին վերընտրել Ընկերության հաշվիչ հանձնաժողովի անդամներ` մեկ տարի ժամկետով:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնապահ - 0 ձայն

Ժողովը որոշեց`

Հաստատել Ընկերության Հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը` 3 անդամներից:

Աննա Առուստամյանին, Ջուլիետա Դալլաքյանին և Սահակ Հակոբյանին վերընտրել Ընկերության հաշվիչ հանձնաժողովի անդամներ` մեկ տարի ժամկետով:

ԼՍԵՑԻՆ-հարց 2`

Երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ընկերության տնօրեն Վահրամ Թեփեղիկյանը` ներկայացնելով Ընկերության 2010 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ ամփոփ զեկույցը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնապահ - 0 ձայն

Ժողովը որոշեց`

Ընկերության տնօրեն Վահրամ Թեփեղիկյանի կողմից ներկայացրած 2010 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ զեկույցն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ-հարց 3`

Երրորդ հարցի կապակցությամբ հանդես եկավ Ընկերության վերստուգող Ալեքսանդր Հարությունյանը և ներկայացրեց 2010թ. ընթացքում Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ իր եզրակացությունը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնապահ - 0 ձայն

Ժողովը որոշեց`

Ընդունել ի գիտություն Ընկերության վերստուգող Ալեքսանդր Հարությունյանի կողմից ներկայացված` 2010թ. ընթացքում Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը (Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացությունը կցվում է սույն արձանագրությանը):

ԼՍԵՑԻՆ-հարց 4`

Չորրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Դոնարա Սայամյանը և ներկայացրեց Ընկերության 2010 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ Ընկերության աուդիտն իրականացնող անձի՝ «ԷՆ-Աուդիտ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացրած աուդիտորական եզրակացությունը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնպահ - 0 ձայն

Ժողովը որոշեց՝

Ընդունել ի գիտություն Ընկերության աուդիտն իրականացնող անձի՝ «ԷՆ-Աուդիտ» ՍՊ Ընկերության՝ Ընկերության 2010թ. գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը (Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը կցվում է սույն արձանագրությանը):

ԼՍԵՑԻՆ-հարց 5՝

Հինգերորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ընկերության Ժողովի նախագահ Կարեն Մանուկովը՝ առաջարկելով հաստատել 2010 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը, վերջինիս կողմից առաջարկվեց նաև հաստատել Ընկերության հաշվապահական հաշվեկշիռը:

Միաժամանակ ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Դոնարա Սայամյանը՝ հայտնելով, որ 2010թվականի ֆինանսական արդյունքներով Ընկերությունը հաշվետու տարին եզրափակել է 49 240 000 (քառասունինը միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ վնասով:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնպահ - 0 ձայն

Ժողովը որոշեց՝

Հաստատել Ընկերության 2010 թվականի տարեկան հաշվետվությունը (Ընկերության 2010 թվականի տարեկան հաշվետվությունը կցվում է սույն արձանագրությանը):

Հաստատել Ընկերության հաշվապահական հաշվեկշիռը (Ընկերության 2010 թվականի հաշվապահական հաշվեկշիռը կցվում է սույն արձանագրությանը):

Հաստատել 2010թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության վնասի չափը՝ 49240000 (քառասունինը միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ և Ընկերության՝ 2010 թվականի ֆինանսական արդյունքներով շահութաբաժիններ չհաշվարկել:

Սահմանված կարգով ապահովել Ընկերության 2010թվականի տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի հաշվի հրապարակումը:

ԼՍԵՑԻՆ-հարց 6՝

Վեցերորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ընկերության բաժնետեր «ԷԼԻՏ-ՆՆ ՖԻՆԱՆՍ ԶԱՄՓՆԻ» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Ռուդիկ Սկրտումյանը և հայտնեց, որ ըստ «Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության Ընկերության տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են մեկ տարի ժամկետով, այդ պատճառով անհրաժեշտ է հաստատել Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմը և իրականացնել Տնօրենների խորհրդի անդամների ընտրությունը:

Միաժամանակ, Ռուդիկ Սկրտումյանի կողմից առաջարկվեց հաստատել Տնօրենների խորհրդի անդամների քանակական կազմը՝ 5 անդամից:

Առաջարկեց Տնօրենների խորհրդի անդամներ վերընտրել Կարեն Մանուկովին, Օլգա Գասպարյանին, Մանվել Սահակյանին, Ռուբեն Ներսիսյանին և Վարպազատ Ներսիսյանին:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնալահ - 0 ձայն

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ. Ռայա Աշոտի Անանյանի ձայնը հաշվի չի առնվում,
քանի որ քվեարկությունը անվավեր է:

Կարեն Մանուկով Կողմ - 307 057 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնալահ - 0 ձայն

Օլգա Գասպարյան Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնալահ - 0 ձայն

Մանվել Սահակյան Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնալահ - 0 ձայն

Ռուբեն Ներսիսյան Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնալահ - 0 ձայն

Վարազդատ Ներսիսյան Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնալահ - 0 ձայն

Ժողովը որոշեց՝

Հաստատել Տնօրենների խորհրդի անդամների քանակական կազմը՝ 5 անդամից:

Ընկերության տնօրենների խորհրդի անդամներ վերընտրել՝

Կարեն Մանուկովին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AH 0576879, տրվել է 05.05.2008թ., 005-ի կողմից)

Օլգա Գասպարյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AC 0293011, տրվել է 22.05.1998թ. 007-ի կողմից),

Մանվել Սահակյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AG 0688773, տրվել է 21.04.2006թ. 011-ի կողմից)

Ռուբեն Ներսիսյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AK 0357736, տրված 06.08.2009թ., 011-ի կողմից),

Վարազդատ Ներսիսյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AM 0315690, տրված 26.05.2011թ. 005-ի կողմից):

ԼՍԵՑԻՆ - հարց 7՝

Հարցի կապակցությամբ Ընկերության Ժողովի նախագահ Կարեն Մանուկովը առաջարկեց կատարել Ընկերության աուդիտն իրականացնող անձի վերընտրություն՝ որչես աուդիտ իրականացնող անձ առաջադրելով «ԷՆ-ԱՌԻԳԻՏ» ՍՊԸ-ին:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնալահ - 0 ձայն

Ժողովը որոշեց՝

ԼՄԵՑԻՆ - հարց 8՝

Հարցի առթիվ Ընկերության Ժողովի նախագահ Կարեն Մանուկովը առաջարկեց «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածներ փոփոխության կապակցությամբ կատարել Ընկերության կանոնադրության փոփոխություն և այն հաստատել նոր խմբագրությամբ՝ ըստ ներկայացված նախագծի (կցվում է):

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:

Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.


Կողմ - 307 206 ձայն Դեմ - 0 ձայն Չեռնպահ - 0 ձայն

Ժողովը որոշեց՝

- Հաստատել Ընկերության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ՝ ըստ ներկայացված նախագծի:
- Հանձնարարել Ընկերության տնօրեն Վահրամ Թեփեղիկյանին սահմանված կարգով համապատասխան փաստաթղթեր ներկայացնել ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համապատասխան տարածքային բաժին՝ սույն որոշումից բխող պետական գրանցում իրականացնելու համար:


Ժողովում ընդգրկված հարցերը սպառվեցին, Ընկերության տարեկան ժողովը հայտարարվեց փակված:

Ժողովի նախագահ՝



Կարեն Մանուկով

Ժողովն արձանագրող
քարտուղար՝



Աննա Առուստամյան

Սույն արձանագրությունը կազմված է 22.06.2011թ. դրությամբ, 2 օրինակից և բաղկացած է 5 էջից:

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

«ԱԼՄԱՍ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Ռուբինյանց 28, հեռ. 24-30-60. ֆաքս 24-35-20

էլ. փոստ info@almastcompany.com

sales@almastcompany.com

N 05 23.06.2011թ.

տեղաբաշխված արժեթղթերի դաս՝ հասարակ, անվանական
արժեթղթերի քանակը՝ 418217 հատ
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)՝ 1000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիագնում ենք, որ
հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն
պարունակում բացթողուններ, որոնք կարող են խնդաբուրել հաշվետվության
անբողջականությունը»:

ստորագրող անձինք՝



Վ.Թեպեյիկյան

Տնօն

23.06.2011թ

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

Դ. Սալամյան

Գլխավոր հաշվապահ

23.06.2011թ

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են (ստորագրությունները հավաստում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման այլ իրավասություն ունեցող այլ անձի կողմից)

Վ. Թեպեյիկյան

Տնօն

11.02.2011թ

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

(ամսաթիվ)



«23» հունիսի 2011թ.